

զիս Շնորհալիի մեկնութեան սկիզբը ճարտարօրէն գծուած են երկններանդ կիսախորան եւ ծաղկեփունջ լուսանցաղարդ. եւ ճակատը վը դարձարէ Կաթողիկէ թուղթերու չորս հեղինակներուն պատկերներով, որոնցմէ Պետրոս առաքեալ՝ բանալիով, Յովհաննէս Աւետարանիչ՝ սկիւհով, եւ Յակոբոս ու Յուդա՝ իրենց չարչարանքի գործիներով բարձր կը բռնեն սիւնադարձ կաթողիկէն, խաչաբարձ զմբէթով, կեդրոնը՝ ծաղկաման եւ փունջով ծաղիկ:

Չորրորդն է թ. 1381 կաշեկաղմ ձեռագիրը, միջակ դիրքով, բոլորդիր, ՆԻ = 420 էջով, առանց որեւէ յիշատակարանի, հաւանօրէն երեքասաներորդ դարու գրութիւն: Սկիզբի տասը թուղթերը կրկնութիւն են Պետրոսի երկրորդ թուղթի Գ. գլուխի Տրդ համարի մեկնութենէն մինչեւ Յովհաննէս Ա. թուղթի Տրդ համարի մեկնութիւնը, որ ամբողջութեամբ կը գտնուի իր կարգին: Յակոբ Առաքեալի թուղթը կը սկսի Ա. էջով:

Հինգերորդ օրինակը, թ. 656, կաշեկաղմ բոլորդիր մը, գրուած է թուին Հայոց ՉԽ = 1291, Դաւիթ քահանայի Եսայիայ մարգարէութեան մեկնութեան (էջ 3-467) կցուած, որ գրուած է ՉԾԱ = 1302 թուականին: Կաթողիկէ թուղթերու խմբագիր մեկնութիւնը կը սկսի 471 էջէն եւ կ'աւարտի 680 էջով, ուր կայ նաեւ համառօտ յիշատակարան մը, որու մասին յետոյ:

Այս օրինակներէն զատ, մատենադարանի ձեռագիր ցուցակին մէջ կը յիշուին Կաթողիկէ թուղթերու մեկնութեան երկու հատուածներ. առաջինը՝ Միջակ կոչուած Տօնապատճառի մը մէջ, (թ. 1205) երես 447-460: Իսկ երկրորդը՝ Հ. Սուքիաս Պարոնեանի Փաբիգու Մատենադարանէն 1864ին գաղափարած հաւաքումին մէջ (թիւ supp. 48 բուրգզգեալ ձեռագիրէն), զոր կը յիշատակէ նաեւ Հ. Բ. Սարգիսեան իր Ցուցակին մէջ (էջ 1230-1) «Ոսկեշղթայ կամ խմբագիրք մեկնութեան Կաթողիկէ թղթոցն անուանելով,

եւ կը բովանդակէ Յակոբ Առաքեալի Գլ. Բ. 2 համարի մեկնութենէն, Կիւրղի վկայութեամբ, մինչեւ Ե. գլուխի Տրդ համարի մեկնութիւնը, Ոսկերեքանի վկայութեան մէկ մասով: Վերջինս կը գրտնուի Մատենադարանիս Հաւաքումն Բանից Նախնեաց ԺԹ. (ըստ Սարգս. ԺԷ.) հատորի մէջ (Ձեռ. Թ. 640):

Մեր Մատենադարանի վերոյիշեալ հինգ ամբողջական օրինակներէն եւ երկու հատուածներէն վերջ կ'արժէ մասնաւորապէս յիշել Գարեգին Կաթողիկոսի «Յիշատակարանը Ձեռագրաց»էն, «Հաւաքումն մեկնութեան Եւթանեցունց Թղթոցն Կաթողիկէայց» Անկիւրիայի Կարմիր-Վանքի թ. 50 ձեռագիրը (ըստ Բարգէն Կաթողիկոսի անտիպ Ցուցակին՝ էջ 248) որուն համեմատ «Ձեռագրիս գրչին, գրութեան ժամանակին, տեղւոյն, եւ այլն մասին տեղեկութիւնը կը պակսին, բայց իր միակ թանկագին յիշատակարանին համեմատ՝ այս գիրքը թարգմանուած է 1163ին եւ արտագրուած 1176ին, Լամբրոնացի Ներսէսի ձեռքով. այնպէս որ առանց վարանման պիտի ըսէի թէ Ձեռագրիս գրիչն է նոյն ինքն Լամբրոնացին Ներսէս, Տեղը՝ Լամբրոնի գղեակը, եւ ժամանակն ալ 1176: Այս ենթադրութեամբ էր որ ցուցակիս ճակատն ալ գրի 1176»?:

Գարեգին Կթղ. Յովսէփեանց «Յիշատակարանը Ձեռագրաց»ի մէջ (էջ 1008-1010) կը յիշէ ուրիշ ձեռագիր մըն ալ Կիւրոսի Մակարայ վանքի, Կաթողիկէ թուղթերու մեկնութեան, բոլորդիր, Ստեփանոս գրչէ, գրուած հաւանօրէն 1250ին: Սակայն ձեռագրին Յիշատակարանէն եւ Գարեգին Կթղ.ի ծանօթութիւններէն կարելի չէ իմանալ թէ խմբագիր մեկնութեան կը վերաբերի, թէ Սարգիս Շնորհալիի մեկնութեան մէկ օրինակն է:

(Շարունակելի)

Հ. ՔԵՐՈՎԱԲԷ Ա. ԶՐԱՔԵԱՆ

ԴԻԻԱՆԱԿԱՆ ՆԻԹԵՐ

ՍՏԵՓԱՆՈՍ Ե. ՍԱԼՄԱՍՏԵՑԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԷԶՄԻԱՍԵՆԻ

(1543 - 1552)

(Շար. տե'ս «Բագմավէպ» 1962, Բ. 3-5, էջ 86)

Բ.

ՍՏԵՓԱՆՈՍ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՄԷՁ

Ստեփանոս Սալմաստեցի 1550ի Ապրիլի վերջերը, հրաժեշտ առնելով Յուլիոս Գ. Պապէն, թողուց յաւիտենական քաղաքը եւ ուղղուեցաւ դէպի Վիեննա, Կարդուս Ե. կայսեր այցելութիւն տալու համար: Թէ է'րը Վիեննա հասաւ եւ ի'նչ ստացաւ յիշեալ կայսրէն՝ հայկական դատին ի նպաստ, ոչ մէկ տեղեկութիւն ունինք. որովհետեւ, ինչպէս վերեւ ըսինք, Վիեննայի դիւաններու մէջ ոչինչ գտած է Հ. Ն. Ալիքեան այս հարցին նկատմամբ: Միայն գիտենք աւանդութենէ՝ թէ Հայոց կաթողիկոսը Վիեննայի արքունիքին մօտ չորս ամիս մնացած է²⁸: Իսկ թէ է'րը հասաւ Լեհաստան, կարելի չէ ճշգրտօրէն որոշել. սակայն յայտնի է որ 1550ի Դեկտեմբեր 19ին առաջ արդէն իսկ Լեհաստան կը գտնուէր: Արդարեւ Լեհապոլսոյ դատական վճիռներու հաւաքածոյին մէջ նշանակուած կը գտնենք հետեւեալ տեղեկութիւնը, զոր լեհերէնէ վը թարգմանենք. «Ք Կրակով, 1550 Դեկտ. 19, Օգոստոս Սիկիզմոնտ թագաւորը ապահարկ կ'ընէ Հայոց Պատրիարքը, Ստե-

փանոս Լէոպոլսեցին՝ տարեկան տուրքէն, որ սովորութիւն էր վճարել Զատիկի շրջանին»²⁹: Հարկ է, սակայն, այստեղ նկատել որ դատական վճիռներու խմբագիրը լաւ հասկցած չէ վերոյիշեալ արքայական առանձնաշնորհումին բուն իմաստը: Մենք հոս կու տանք սկզբնագիր վաւերագրին թարգմանութիւնը:

«Սիկիզմոնտ Օգոստոս, Աստուծոյ շնորհօք՝ թագաւոր Լեհաստանի ... կը յայտարարենք ներկայ նամակով ամէնուն, որոնց կը վերաբերի, թէ մեր քանի մը խորհրդականներու բարեխօսութեան վրայ՝ զոր երեւելի Ստեփանոս Լեոպոլսեցի հայ Պատրիարքին ի նպաստ մատուցին մեզի, որոշեցինք որ իրեն յանձնուի եւ ընծայուի այն տուրքը, զոր Լեոպոլսոյ Հայերը սովոր էին մեզի տալ ամէն տարի Զատիկի տօնին. ուստի, մենք մեր այս նամակով զայն կու տանք ու կը նուիրենք իրեն, սահմանելով որ ամէն տարի ստանայ զայն, որքան ժամանակ որ մեզի հաճոյ թուի:

Ուստի կը հրամայենք մեծանուն Կոմս Յովհաննէս պալատական՝ Թէչինի, Սանտոմիրայի, Լուպլինի եւ Լէլիովիայի կուսակալին, Ռուսիոյ եւ Սանտոմիրայի մեր հարկահաւաքին, որ այն տուրքը, ինչ գումար ալ ըլլայ, յանձնէ կամ հրաման տայ յանձնել վերոյիշեալ Ստեփանոսին,

28 Թշկեանց, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վեներիկ, 1830, էջ 107:

29 Akta Grodzkie i Ziemske (Լեհերէն), Lwów, 1884, t. X, p. 59, nr. 882.

ամէն Ձատկի տօնին: Իսկ մենք մեր նուէրը՝ ծախսերու փոխան պիտի հաշուենք:

Ի հաստատութիւն այս նամակին, կը գնենք մեր կնիքը իբր հաւաստիք: Տուեալ ի Կրակովիայ, Ուրբաթ օր, նախ քան Ս. Թոմասի մերձաւոր տօնը (19 Դեկտ.) 1550, մեր Թաղաւորութեան 21րդ տարին:

Սիկիզմոնտ Օգոստոս Արքայ»^{29*}

Ուրեմն Ստեփանոս Ե. Վիեննայէն անցած էր Լէոպոլիս 1550ի աշնան: Ուստի, այժմ քննենք այն գործունէութիւնը, որ ան ունեցաւ հայկական այս կեդրոնին մէջ. գործունէութիւն մը՝ որու մասին թէ հայ եւ թէ լեհ պատմագիրներ շատ ճշգրիտ տեղեկութիւններ տուած չեն միշտ:

Լէոպոլիս քաղաքը 1367էն ի վեր հայ արքեպիսկոպոսներու պաշտօնական աթոռանիստը եղած էր. առաջին արքեպիսկոպոսը, Գրիգոր Մեծն, Սիսի մէջ ձեռնադրուեցաւ, Մեսրոպ Արտաղեցիէն³⁰ եւ իր պաշտօնին մէջ հաստատուեցաւ երեք տարի վերջ, Լեհաստանի Թաղաւոր՝ Մեծն Գաղիմիրէն³¹: Մինչեւ ԺԶ. դարու կէսերը, եօթը Արքեպիսկոպոսներ հոն բաղմեցան. վերջինը՝ Գալուստ Ստեփանեան, Լեհերէն կոչուած Գրիգան, հաստատուած էր իր պաշտօնին մէջ 1516ին, Սիկիզմոնտ Ա. Թաղաւորէն³², ու մեռած էր 1542ի տունները: Արդարեւ երեւելի Լեհ բեմասաց ու գրիչ Լուպլիշիք, որ 1544ին հրատարակած է իր գրքովը «Մեր կրօնութիւն Հայոց» կոչուած, կը գրէ հե-

տեւեալը. «Մինչդեռ այս մկրտութիւնը կը վերածէ լատիններէն, Լէոպոլիսոյ հայերը նոյն ատեն չունէին իրենց եպիսկոպոսը, որ ծերութեան պատճառաւ մեռած էր»³³: Եւ Լէոպոլիսոյ հայ արքեպիսկոպոսական աթոռը Թափուր կը մնար մինչեւ 1551, ինչպէս կը վկայէ պատմութիւնը³⁴: Եւ անշուշտ այս պարագան է որ մղած է ինչ ինչ պատմագիրներ հաստատելու թէ Ստեփանոս Սալմաստեցին, կաթողիկոսական աթոռէն հրաժարելէ վերջ, ստանձնած ըլլայ Լէոպոլիսոյ Թեմին վարչութիւնը, անոր արքեպիսկոպոսը ըլլալով:


Այսպէս օրինակի համար, Հ. Մ. Բժըշկեանց կը գրէր 1830ին, թէ Գալուստ եպիսկոպոսի մահէն վերջ «Լէոպոլիսոյ» արքեպիսկոպոս նստաւ Ստեփանոս»³⁵: Նմանապէս Պարոնշ. «Կ'ըսուի թէ Գրիգան (Գալուստ) եպիսկոպոսէն վերջ, Լէոպոլիսոյ եպիսկոպոսական աթոռը ստանձնեց Ստեփանոս, Մեծ Հայքի Պատրիարքը»³⁶: Նոյնպէս Լէոպոլիսոյ եպիսկոպոսարանի պաշտօնական տարեգիրքը (1933ին) կը գրէ. «Ստեփանոս, Հայոց Պատրիարքը, յետ Հռոմի մէջ կաթողիկէ հաւատքի դաւանութիւն տալու, հրաժարելով պատրիարքութենէն, յանձն առաւ Լէոպոլիսոյ վարչութիւնը: Վախճանեցաւ 1551ին»³⁷:

Լէիւրիցքի կը վարծէ թէ. «Այժմ (այսինքն Գալուստ եպիսկոպոսի մահէն վերջ) պատմութեան բեմին վրայ երեւան կ'ելլէ (Լէոպոլիսոյ) հայ հերձուածող եպիսկոպոսներու ամէնէն հետաքրքրական դէմքը... այն է Մեծ Հայքի հրաժարեալ Պատրիարքը, Ստեփանոս Ե... Ան Հռո-

մի մէջ Պողոս Գ. Պապին հիւրը եղաւ... եւ աւելորդ նկատելով վերադառնալ հայրենիք, ուր հերձուածը կը շարունակուէր յամառօրէն, կամաւոր աքսորը ընտրեց Լեհաստանի մէջ եւ հաստատուեցաւ Լէոպոլիս»³⁸:

Օպերթինսքի ծանրանալով Ստեփանոս Ե.ի կեանքին վրայ, նախ իբր կաթողիկոս եւ յետոյ իբր առաջնորդ մեր Թեմին, բոլորովին անհիմն ենթադրութիւններ ընելէ վերջ³⁹ կ'եղբակացնէ հետեւեալը. «Ստեփանոս Լէոպոլիս կը հասնի Գալուստ եպիսկոպոսի մահէն քիչ վերջ, Ռուշի Հայոց առաջնորդ ըլլալու համար: Սակայն Լէոպոլիսոյ մէջ, ինչպէս իր շատ մը նախորդները, դժուարութեան կը հանդիպի՝ յաղթահարելու հայ մեծամեծներու խնդրութիւնը եւ տիրակալութիւնը, որոնք բոլորովին հակառակ էին (Հռոմի հետ) միութեան: Հուսկ, 1548ի վերջերը, կամ 1549ի սկիզբները, կը հրաժարի իր պաշտօնէն եւ կը մեկնի Հռոմ, ուր նոյն տարին կ'այցելէ Պողոս Գ. Պապին: Ուստի աղբը, նոր եպիսկոպոս մը կ'ընտրէ՝ յանձին Գրիգորի, որ կը հաստատուի իր պաշտօնին մէջ՝ Լեհաստանի Թաղաւորէն, 1555ին: Մինչ Ստեփանոս, 1564ի տունները, հայրենիք վերադարձի ճամբու վրայ՝ կը հանդիպի Լէոպոլիս, ուր կը մնայ ոչ թէ Թեմին վարչութիւնը ձեռք առնելու, այլ հանդարտեցնելու բոլոր տարաձայնութիւնները, որոնք ծագած էին ընդմէջ Գրիգորի եւ իր հաւատացեալներուն: Դժբախտաբար չի յաջողիր հանդարտեցնել եւ կը վախճանի 1564ին ու կը թաղուի Հայոց մայր եկեղեցին»⁴⁰:

Այս վարծիքին հրապարակ ելլելէն վերջ՝ Լէոպոլիսոյ տարեգրքին հրատարակիչը (1936ին) հարկ տեսաւ ուղղել նախապէս գրուածները հետեւեալ կերպով. «Ստեփանոս, Հայոց կաթողիկոս, յետ



Լէոպոլիսոյ Հայոց մայր եկեղեցին
(շինուած 1363ին)

կատարելու կաթողիկէ դաւանութիւնը ի Հռոմ եւ հրաժարելու կաթողիկոսութենէն, կառավարեց Լէոպոլիս Թեմը մինչեւ 1555 թուականը: Վախճանեցաւ 1564ին»⁴¹: Ահա ինչ որ ծանօթ էր մինչեւ հիմա Ստեփանոս Սալմաստեցիի գործունէութեան մասին Լէոպոլիսոյ մէջ:

Այժմ անցնինք նկատելու պատմական աղբիւրները (թէեւ սակաւաթիւ), որոնց լոյսին տակ պիտի ջանանք ուրուագծել մեր կաթողիկոսին գործունէութիւնը Լէոպոլիս քաղաքին մէջ: Գիտենք այլ եւս թէ Ստեփանոս Ե. Լէոպոլիս ժամանած էր 1500ի վերջերը: Բանասէր Յ. Անասեանի ջանքերով ի լոյս եկած յիշատակարաններէն կը տեղեկանանք որ Ստեփանոսի առաջին գործերէն մէկը եղած է Լէոպոլիսոյ հայոց Թափուր աթոռին առաջնորդը հոգալը: Արդարեւ Հայոց ՌԴ. Թուականին (1555) Օհաննիստի մէկէն գրիչը Լէոպոլի-

29* Bibliot. Jagiellonska (Cracovia), ms. Nr. 5445, f. 33.

30 Աւիւան, Կաթողիկէ կամ Տաթղիկի Հայոց Լեհաստանի, Վենետիկ 1896, էջ 5 եւ յջ.:

31 Lechicki Cz., Kosciok ormianski w Polsce (Լեհերէն), Lwów 1928, p. 33-34 Baracz S., Żywoty sławnych Ormian w Polsce (Լեհերէն), Lwów 1856, p. 133.

32 Obertynski S., Die florentiner Union der polnischen Armenier... --Orient. Christiana XXXVI, I, Roma 1934, p. 50-51.

33 Baracz, Անդ, p. 161.

34 Lechicki, Անդ, p. 41, 179; Grömicki T., Ormianie w Polsce..., (Լեհերէն) Warszawa 1889, p. 20-21.

35 Բժշկեանց, Անդ, էջ 107:

36 Baracz S., Rys dziejów ormiańskich (Լեհերէն), Tarnopol 1869, p. 112.

37 Schematismus Archidiocesis Leopoliensis ritus arm.-cath., pro anno Domini 1933, Leopoli, p. 11.

38 Lechicki, Անդ, p. 41.

39 Obertynski, Անդ p. 34, 37 եւ յջ.:

40 Obertynski, Անդ, էջ 33-36:

41 Schematismus Archidiocesis Leopoliensis ritus arm.-cath., pro anno Domini 1936, Leopoli, p. 10.

սոյ մէջ վաւարտէ վարդանայ գերբը, հետեւեալ յիշատակարանով. «Փառք համադոյ սուրբ եւ միաթագ աստուածութեան... Դարձեալ աղաչեմ աղօթից մի՛ մոռանար զԳրիգոր վարդապետի, նորոգող-բոյ քաջ ընտանապետն... եւ զուսուցիչն զՍտեփանոս կաթողիկոս Սալմաստեցին, որ ի Ռ. Թուին Հայոց առ Քրիստոս փոխեցաւ յիշով քաղաքին, եւ եղ յաթոռ եպիսկոպոսութեան իշովայ զԳրիգոր վարդապետն, զարդար եւ զանարատն կուսակրօն զվկայեալն ի բաղմաց, վասն աղաչանաց ժողովրդեանս»⁴²:

Բայց Գրիգոր վարդապետի Լէոպոլսոյ աթոռին բարձրացումը, կ'երեւի թէ Լեհաստանի Հայոց միաձայնութեամբը եղած չէ. որովհետեւ միայն մէկ մասը (այն է Լէոպոլսոյ Մեծերու խումբը) որոշում առաւ Սիկիդմոնտ Բ. Օգոստոս թագաւորին ներկայացնել խնդրանքը, նորոգողը եպիսկոպոսին հաստատումին համար: Եւ ինչ որ աւելի նշանակալից է, այն ալ միայն 1555ի սկիզբները: Մինչդեռ Կամենիցի Հայերը, ինչպէս կը տեղեկանանք Լեհական վաւարութեան ընտանիքներէն, զորս Օպերթինսքի մէջըրած է, վարդապետին ընտրութիւնը ճանչցան 1557ին, առ ալ յետ որոշ պայմաններ դրնելու⁴³: Արդ, ճիշտ այն պարագային, այն է 1555ի Մարտ 21ին, Սիկիդմոնտ թագաւորը հետեւեալ վճիռը հանեց. «Սիկիդմոնտ Օգոստոս եւն... կը ծանու-

ցանենք... որ մեզի ներկայացուցաւ մեր խորհրդականներէն ոմանց ձեռքով, հայազգի Նիկողոս աւուարմբ, որ մեր ծառան է եւ թարգմանը թուրքերէն լեզուի, թէ Գեր. Գրիգոր եպիսկոպոսը ընտրուած է եւ որոշուած մեր բոլոր Հայերու հաւանութեամբ ու քուէներով, եւ մեզի խնդրանք ներկայացուած որ հաճինք հաւանիլ, վաւերացնել, եւ հաստատել այս ընտրութիւնը եւ զհաւակալութիւնը: Ուստի մենք... նկատի առնելով Գեր. Գրիգորի բարքին ու վարքին անբասիր ըլլալուն վկայութիւնը, կը հաւանինք ու կը վաւերացնենք այս ընտրութիւնը, եւ նոյն ինքը Գրիգորը մեզի հպատակ բոլոր Հայերուն եպիսկոպոս կը կարգենք ու կը հաստատենք ներկայ վճիռով: Արդ, բոլոր մեր հպատակ Հայերուն կը յայտարարենք ու կը հրամայենք որ յիշեալ Գրիգորը ընդունին իբր ճշմարիտ եւ օրինաւոր եպիսկոպոս, եւ հնազանդին անոր ու յարգեն զինքը...»⁴⁴:

Այս արքայական վճիռէն քանի մը շաբաթ վերջ արդէն Օհաննիսուկ գրեթէ կ'արձանագրէ իր յիշատակարանին մէջ թէ «Գրիգոր բաբունապետն, որ թուին Ռ.Դ. (1555) յԱպրիլի Ժ.Դ. եպիսկոպոս եղեւ Լուի եւ Կամենից մայրաքաղաքացս, աղաչանօք եւ բազում խնդրուածովք ժողովրդեանս հայկազեան ազգիս, որ աստ կան բնակեալ ի մէջ խառնայխառն ազգացս Լեհ եւ Ու(ու)ոլ կոչեցեալ, ի թա-

զաւորութեան Ձիկմոնդ Ակոստոսի...»⁴⁵: Օհաննիսուկ իր յիշատակարանը կը վերջացնէ հետեւեալ ձեւով. «(Յիշեցէք) զԳրիգոր վարդապետ, մականուամբ Անանիայեցի կոչեցեալն, Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի աշակերտն, դաւառաւ վարդապետ, որ ընդ վարդապետին իւր զնացեալ Հռոմ, ի Պօղոս եւ Պետրոս. եւ անտի անցանելով զծով եւ զցամաք... հասին իշով... եղ կաթողիկոսն եպիսկոպոս քաղաքին...»⁴⁶:

Այսպէս Ստեփանոսի առաջին նպատակը իրագործուած էր. կը մնար երկրորդը, որ շատ աւելի կարեւոր էր քան առաջինը, այսինքն է՝ Հայկական դատին խնդիրը, որուն համար մեր կաթողիկոսը եկած էր Լեհաստան եւ պէտք էր խօսիլ Սիկիդմոնտ Բ. Օգոստոս թագաւորին հետ:

Այս միջոցին տեղի ունեցաւ տարօրինակ դէպք մը, զոր հոս կը պատմենք ցոյց տալու համար մէկ կողմէն՝ մեր կաթողիկոսին մտայնութիւնը եւ եռանդը, եւ միւս կողմէն՝ ամբողջացնելու համար ժամանակագրական տուեալները: Վերել յիշուած «Լէոպոլսոյ դատական վճիռներու հաւաքածոյին» մէջ կը պատմուի թէ «Ի Կրակով 1551ի Մայիս 19ին, Սիկիդմոնտ Օգոստոս թագաւորը, Լէոպոլսոյ Ռութէն օրթոտոքս եպիսկոպոսին (Արսէն Պալապան) բողոքին վրայ, կը յանձնարարէ Հայոց Պատրիարքին, որ վերադարձնէ իրենց մօրը՝ յունադաւան երկու տղաք, զոր ան (Ստեփանոս) փախցուցած էր՝ կաթողիկէ դաւանանքի դարձնելու նպատակով»⁴⁷:

Դառնալով այժմ Ստեփանոսի երկրորդ նպատակին շուրջ խօսելու, չենք կրնար ըսել՝ թէ ինչ կըրցած է ընել եւ ստանալ

Սիկիդմոնտ Բ. Օգոստոս թագաւորէն Հայկական դատին ի նպատ. մանաւանդ որ այժմ հնարաւորութիւնն ալ չունինք հարկաւոր պրպտումներ ընելու այդ մասին՝ Լեհական դիւաններու մէջ: Բայց զիտնալու ենք որ յիշեալ թագաւորը ճիշտ այս շրջանին շատ մտահոգութիւններ ունէր իր թագին նկատմամբ, որով դժուար էր որ կարենար զբաղիլ Հայկական հարցով⁴⁸: Սակայն Հ. Մ. Բժշկեանց, որ կըրցած էր պրպտել Լէոպոլսոյ Հայոց ազգին դիւանները, կը հաւաստէ թէ Ստեփանոս Սալմաստեցի Սիկիդմոնտ Բ. թագաւորին նամակ մը դրած է, «որով ծանուցանէ արքային զորպիսութիւն Հայոց: Գոյ նաեւ իւր կտակ, յորում յիշէ թէ Սըրբազան Հայրապետն Հռոմայ առաքեալ զինքն առ Ֆէրտինանտոս կայսր Գերմանացոյց, առ որում եկաց ամիսս չորս: Եւ վասն այնորիկ Պապն ընծայեալ է նմա իբրեւ սիրելւոյ՝ ծանրազին խաչ, մուշկէ եւ հանդերձ սպիտակ եւ կարմիր, շապիկ եւ թագ եպիսկոպոսական»⁴⁹: Բժշկեանցի հաւաստումը, որ կարծես ներքին քննադատութենէն սխալ պէտք է համարիլ, ընդհակառակն կը հաստատուի ուրիշ երեւելի հայ պատմագէտ եւ «հումանիստ» Յովսէփ Ե. Մինասովիչի վկայութեամբ, որ 1772ին արդէն կը գրէր իր (տակաւին անտիպ) գործին մէջ, «Յիշատակարանք զազգէն, զթագաւորութենէ եւ զթագաւորաց Հայոց» հետեւեալը. «Բայց Վիլնեցի ձեռագրին հեղինակը, որ նոյն Յիսուսեան ընկերութեան կրօնաւորներէն էր... (կ'ըսէ) Վեցերորդ արքեպիսկոպոսը Հայոց ազգին եղաւ Ստեփանոս. տակաւին դոյութիւն ունի անոր նամակը՝ ուղղուած Լեհաստանի վեհափառ թագաւորին եւ զրկուած Հռոմէն, որու մէջ կը յանձնա-

42 Անասեան Յ. Ս., Դիտողութիւններ Ստեփանոս Սալմաստեցու կենսագրութեան վերաբերեալ, էջմիածին 1956, Ը-Թ, էջ 97: Յիշատակարանը մէջբերինք Անասեանի յօդուածէն առնելով. միայն թէ անոր կողմէ քառակուսի փակադիւններու մէջ աւելցուած երկու բառերը զորս թողուցինք, քանի որ բնագրին մաս չեն կազմեր եւ Անասեանի կողմէն աւելցուած են, սխալ մեկնութեան կամ ենթադրութեան մը վրայ հիմնուած. այսինքն՝ համարելով թէ 1551ի մեռնողը Գրիգոր վարդապետին նախորդ եպիսկոպոսն ըլլայ. մինչդեռ վերել ցոյց տրուեցաւ թէ Գրիգորի նախորդը արդէն մեռած էր 1542ին: Եւ Լէոպոլ-

սոյ աթոռը թափուր կը մնար մինչեւ Սալմաստեցիի հոն ժամանելը: Ուստի յիշատակարանի խօսքերը իրենց բնական իմաստով իմանալու է Ստեփանոս Սալմաստեցիին համար ըսուած. «որ ի Ռ. Թուին Հայոց առ Քրիստոս փոխեցաւ յիշով քաղաքին»: Բնական է այս խօսքը պատմութեան մէջ իբր միջանկեալ մտած է, եւ կը շարունակուի պատմութեան թելը Գրիգոր վարդապետի մասին, զոր Սալմաստեցին «եղ յաթոռ եպիսկոպոսութեան յիշովայ»:

43 Obertynski, Անդ, էջ 20, ծն. 1 եւ էջ 38, ծն. 2:

44 Անդ, էջ 51-52:

45 Անասեան, Անդ, էջ 97:

46 Անդ, էջ 98:

47 Akta Grodzkie i Ziemskie, t. X, p. 60, nr. 906; Chodyncki K., Kóscioł Prawosławny a Rzeczpospolita Polska (Լեհերէն), Warszawa 1934, p. 93.

48 Konopczynski W., Dzieje Polski nowożytnej (Լեհերէն), Londyn 1958, t. I, p. 68:

49 Բժշկեանց, Անդ, էջ 107:

բարութիւն Լեհաստանի թագաւորին բարեպաշտութեան՝ Հայ ժողովուրդին հովանաւորութիւնը: Կը գտնուի նաեւ Վրաստան, Կնքուած իր կնիքով, որուն մէջ կը պատմէ թէ ինչպէս Սրբազան Քահանայապետէն զրկուեցաւ Ֆէրտինանտ կայսեր եւ թէ չորս ամիս անոր մօտ մնաց, յետոյ Լէոպոլտ վերադարձաւ: Հոն կը յիշէ մեծ խաչը, մուշէղը (եկեղեցական կարճ շապիկ) սպիտակ եւ վարմիր զգեստները, շապիկը, եպիսկոպոսական թագը, զոր բոլորն ալ Սրբազան Քահանայապետը իրեն պարգեւած էր իբրեւ իր ամենասիրելի հիւրին»⁵⁰:

Հոս պէտք է նկատել որ երկու վերջին վկայութիւններուն մէջ, ինչ ինչ մանրամասնութիւններ թէեւ անճիշտ կը թուին, բայց չեն հակասեր պատմական ճշմարտութեան, այլ վը կարօտին բացատրութեան մը: Արդարեւ Կարոլոս Ե. կայսրը (1500-1558), որդին Փիլիպպոս Գեղեցիկի, Աւստրիոյ արքեպիսկոպոսին, եւ Յոլանդացի Լաւրացիայի, ժառանգած էր, ի միջի այլոց, նաեւ Հապսպուրկներու կալուածներու իրաւունքը⁵¹: Սակայն 1521ին ան թողուց Աւստրիացուց կալուածներու ժառանգութիւնը ի նպաստ կրտսեր եղբորը, Ֆէրտինանտի (1503-1564), որ անոնց թագաւոր եղաւ եւ

1558ին ալ կայսր⁵²: Ասկից առաջ եկած են յիշեալ վկայութիւններուն մէջ այդ անճշտութիւնները: Բայց ասկէ չի հետեւիր որ Ստեփանոս Սալմաստեցին խօսած չըլլայ Ֆերտինանտ Ա. թագաւորին հետ ալ՝ հայկական դատին շուրջ:

Ահա ինչ որ կարելի եղաւ ըսել Ստեփանոս կաթողիկոսի Լեհաստանի մէջ անցուցած ժամանակին մասին: Մինչդեռ Օրմանեան խօսելով նոյն նիւթին շուրջ, Ազգապատումի մէջ կը գրէ հետեւեալը. «Լեհաստանի յիշատակներն ալ մեզի յատուկ մանրամասնութիւններ չեն տար Ստեփանոսի գործունէութեան, որ կարծես թէ անցած տեղերուն մէջ ընաւ հետք չէ թողուցած, անցած ըլլալուն վրայ կատարած յարուցանելու չափ»⁵³:

Մեր ըսածներուն լոյսին տակ՝ Օրմանեանի խօսքերը բաւական տարօրինակ կը թուին. մանաւանդ, երբ նկատի առնենք՝ որ եթէ ան բանար Հ. Մ. Բժշկեանցի յիշեալ գործը կամ Ալիշանի Կալենիցը, զոր իր մատենագիտական ցանկին մէջ կը յիշէ, բաւական պիտի ըլլար համոզուելու հակառակին:

(Շար. 2)

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՊԵՏՐՈՎԻՉ
(Լեհահայ)

ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԷՆ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

(Շար. տե'ս «Բագմավէպ» 1962, ք. 3-5, էջ 62)

ԳԼՈՒԽ Ե.

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿՈՒ ՍՈՒՐԻ ՄԻՋԵՒ

Խաչիկ Բ. կաթողիկոս - կայսերական բանակը բնութեմէն հալածուած - Կոստանդինոպոլիս կայսր հռչակուած - Խաչիկ Բ. կաթ. Կ. Պոլսոյ մէջ - Թուրքերը Սեբաստիոյ մէջ - Հաւատաւնութեան ատեան - Մագիստրոսի վերջին ձեռնարկները - Խաչիկ Բ. ի ազատութիւն - Մագիստրոսի սերունդը - Պաղիմի եւ Թլիսու մի կոտորածները - Փոլս-վրէժի պատերազմներ:

ԽԱՉԻԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Այդ մի եւ նոյն 1058ի վշտաշատ տարուան մէջ, Պետրոս Գետադարձ կաթողիկոսը կեանքը կնքեց եւ թաղուեցաւ Սեբաստիոյ Ս. Նշան վանքին մէջ: Խանդավառուող Մ. Ուռհայեցին կը կոչէ գինքը «ամենագովելին եւ պարիսպ սրբոյ եկեղեցւոյ»: Սակայն արտասուելի իրականութիւնը այն էր, որ Հայաստանեայց եկեղեցւոյ այդ պարիսպը, զեռ աչքերը չի կարող հեռուէն տեսնել ու դիտել էր իր հայրենիքը, որ քարուքանդ եղած, անչքացած, անմարդացած, ցաւալի եւ ողբալի կացութեան մատնուած, ոտքի վրայ կը մնար չնորհիւ տառապող հայ ժողովուրդին, որ ապրելու, յարատեւելու գերբնական ոյժ մը ունէր իր հոգիին խորքը: Այս բոլորը տեղի ունեցեր էր Անի քաղաքին վաճառումին պատճառով, որու գլխաւոր գերակատարն էր, ինչպէս

տեսնուեցաւ, իր յունամուլ, շահասէր, եւ կարճատես քաղաքականութիւնը:

Հայաստանեայց եկեղեցւոյ գլուխը կը վախճանէր Սեբաստիոյ Արծրունի թագաւորութեան սահմանին մէջ, որ թէեւ հայ էր, բայց զաղթական ձեւ ունէր. ուստի կարելի էր հին ոճով կատարել Պետրոս Գետադարձի յաջորդին ընտրութիւնը, քանի որ Հայաստանի բնիկ թագաւորը իր զահէն հալածուած եւ հայ նախարարները իրենց բնիկ զաւառներէն ընտրուած, չէին կարող կաթողիկոսական ընտրութեան մասնակցել: Բայց, բարեբախտաբար նախահոգ զգուշութեամբ՝ Գետադարձ իրեն տեղապահ կարգեր էր, ինչպէս տեսանք, իր քեռորդին՝ Խաչիկ եպիսկոպոսը, որ կը նստէր Անի քաղաքը: Կաթողիկոսական ձեռնադրութեան ալ պէտք չունէր, քանի որ, ինչպէս կը վկայէ ահանաւան պատմիչը՝ Ա. Լաստիվերոցին, «գձեռնադրութիւն հայրապետութեան վաղնջուց ընկալեալ էր»¹:

Խաչիկ Բ. վեց տարի միայն կաթողիկոսական իշխանութիւն վարեց: Այդ համառօտ ալեկոծ շրջանին՝ անցաւ վշտերու շարքէ մը, սրտի վսկիծ ունեցաւ տեսնելով յունական կայսրութեան նենգաւոր քաղաքականութեան զաղտնի ծալքերը, որոնց դիմումն էր Հայոց թագաւորական աթոռին ջնջումը: Բայց նա անընկճելի արիւթեամբ տոկաց փոթորիկներուն, ամէն շահախնդրութենէ հեռու, պաշտպան հայ եկեղեցւոյ աղղային ծէսին եւ

50 Bibl. Apost. Vatic., cod. Vatic. Lat., nr. 12561, p. 122.

51 Capasso C., Carlo V. imperatore, art. in Enciclopedia Italiana Treccani, vol. IX, p. 41-45.

52 Kretschmayr H., Ferdinando I imperatore, art in Encicl. It. Treccani, vol. XV, p. 8-9.

53 Օրմանեան, Ազգապատում, Բ. սիւն 2244:

1 Ա. Լաստ. ԺԴ. 60: